ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հողային հարցը Թուրքիայում ամենակարևոր ու կենսական հարցերից մեկն էր։ Երկրի համարյա բոլոր շրջաններում բնակչության չնչին փոքրամասնությունը կազմող աղաներն ու փաշաները իրենց ձեռքերում կենտրոնացրել էին հողերի մեծ մասը, իսկ գյուղացիությունը, որ կազմում էր բնակչության գերակշռող մասը, տառապում էր սակավահողությունից ու հողազրկությունից։ Աբդուլ Համիդի վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով հողային հարցը առանձնապես սուր կերպարանք էր ստացել մանավանդ Արևմտյան Հայաստանում։ Նպատակ դնելով ֆիզիկապես ոչնչացնել և տնտեսապես հյուծել հայերին, սուլթանը զանազան անանպարհներով խլել էր նրանցից շատերի հողերը և այդ մարդկանց դրել կիսաճորտական ու ճորտական կախվածության մեջ։ Օգտվելով սուլթանի հայասյաց քաղաքականությունից ու պաշտպանությունից, քրդական աղաներն ու թուրքական բեկերը Արևմտյան Հայաստանում արագորեն սկսեցին զավթել հայերի հողերը, կոտորել կամ արտաքսել նրանց իրենց դարավոր հայրենիքից։ Ֆեոդալական այդ վերնախավի հափշտակումները մեծ չափերի հասան հատկապես 1890-ական թթ. հայկական ջարդերից հետո։ Քրդական մի շարք աղաներ ու բեյեր դարձան ընդարձակ վարելահողերի ու արոտավայրերի տերեր և, կողոպտելով հայ գյուղացիների նաև շարժական գույքը, կուտակեցին առասպելական հարստություն[1]։

Մեր ձեռքի տակ եղած ոչ լրիվ տվյալներով, քրդական աղաներն ու թուրքական բեյերը Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում հայ շինականներից խլել էին 1030000 օրավար կամ 741600 հեկտար հող։ Ամենամեծ հափշտակումները կատարել էին Բիթլիսի վիլայեթում (350000 օրավար կամ 252000 հեկտար), իսկ ամենաքիչը՝ Էրզրումի վիլայեթում (100000 օրավար կամ 72000 հեկտար)[2]։ Հողազրկված գյուղացիների մեծ մասը, մնալով հայրենիքում, դարձել էր գերազանցապես մարաբա, այսինքն՝ ֆեոդալական կախյալ գյուղացի և մասամբ գյուղական բանվոր, իսկ մյուս մասը թուրքական գերությունից ազատվելու համար թողել էր հայրենիքը, փախել արտասահման, ապաստանել զանազան երկրներում, հատկապես Ռուսաստանում՝ Կովկասում[3]։ Աղաներն

---

1 «Մուրճ», 1904, № 4, էջ 13—14, 1905, № 8, էջ 6 և 11։ Վրացական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ (ԿՊՊԱ), ֆ. 521, ցուց. 2, գ. 315, թ. 240։

2 «Ազատամարտ», 1911, № 489։

3 «Աշխատանք», 1911, № 22, էջ 11։

ու բեյերը, բացի գյուղացիական հողամասերից, բոնագրավել էին նաև հայոց վանքապատկան ու եկեղեցապատկան կալվածքները։ Նրանք հափշտակել էին 65 կտորից ավելի ագկապատկան հող, 36 եկեղեցի, 13 վանք և բազմաթիվ այլ սրբավայրեր ու գերեզմանոցներ[4]։

Համիդյան բռնապետության դեմ պայքարելու շրջանում երիտասարդ Թուրքերը, մասսաների համակրանքը վայելելու և նրանցից պաշտպանություն ստանալու համար, իրենց ծրագրերից մեկում խոստանում էին հող տալ գյուղացիներին։ Նրանք ագդարարում էին, թե ովքեր այս կամ այն կերպ զրկվել են իրենց հանդակներից, պետք է դրանք անվճար ետ ստանան, և անկամ այն դեպքում, եթե դրանց վրա արդեն հաստատվել են մուհաջիրները, այսինքն՝ Կովկասից ու Բալկաններից եկած մահմեդական գաղթականները։ Ապա ազդարարում էին, որ բացի գյուղացիներից, իրենց կալվածքները պետք է ետ ստանան նաև վանքերն ու եկեղեցիները՝։

Իշխանության գլուխ անցնելուց հետո, մասսաների մեջ իրենց դիրքերն ամրապնդելու և հեղինակություն ձեռք բերելու համար, իթթիհատականները որոշ տեղերում նպաստեցին այն բանին, որ հայերը կարողանան ետ բերել իրենց կորցրած հողերը։ 1908—1910 թթ. նրանք վերադարձրին իրենց հանդակները Բուլանրխի գավառում, Մուշի դաշտում, Երզնկայի շրջանում, Վանի վիլայեթում, հատկապես Ազլջաղում ու Արճեշում, Խարբերդի ու Երզնկայի դաշտերում և այլն։ 1908 թ. սեպտեմբերին ականատեսներից մեկը գրում էր. «Հայերու պատկանող հողերու վրա բնակվող քյուրտերն հետզհետե կհեռացվին իրենց տեղերեն, որովհետև բուն տերերն եղող հայերն եկած են Կովկասեն և այժմ կվերադառնան իրենց նախկին բնակավայրերը»[5]։

1910 թ. հունիսին Բ. Քեչյանը նշում էր, որ հայրենիք վերադարձած հայ «գաղթականներեն մաս մը տիրացավ իր հողերուն»[6]։

Նույն թվականի աշնանը «Հորիզոնի» թղթակիցը գրում էր, թե Երզնկայի, Մուշի և Սղերդի գավառներում «հանուն ճշմարտության պետք է ասել, որ հայերը... ետ ստացան բազմաթիվ բռնատիրած հողեր»[8]։

Բայց երիտասարդ Թուրքերը, մասնակի զիջումներ կատարելով հայ գյուղացիությանը, աշխատեցին անխախտ պահել աղայական հողատիրությունը։ 1908 թ. սեպտեմբերին իրենց ծրագրում նրանք հայտարարեցին, թե գյուղացիներին հողով բավարարելը պետք է կատարել պետական վարկեր բաց թողնելու ճանապարհով, սակայն պետք է այնպես անել, որ չխախտվեն խոշոր հողատերերի իրավունքները[7]։ Վարկի գումարը սկզբում նախատեսվում էր 60000 ոսկի կամ 5000000 ղուրուշ, իսկ 1912 թ. բարձրացվեց 100000 ոսկու[10]։ Հայերը այս գումարով պետք է փրկագնեին իրենց հանդակները կամ ձեռք բե-

---

4 «Ազատամարտ», նույն տեղում։

5 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (ՌԱՔԱ), ֆ. «Քաղարխիվ», 1907, գ. 1643, թթ. 239—243։

6 «Բյուզանդիոն», 1908, 6 սեպտեմբերի։

7 Նույն տեղում, 1910, № 4149։

8 «Հորիզոն», 1910, № 215։

9 ՍՍՀՄ կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվ (հետագայում՝ ԿՊՌԱ), ֆ. 2000, գ. 6849, թ. 88։

10 Վրացական ՍՍՀ ԿՊԱ, ֆ. 71, գ. 39, թ. 33։ «Բյուզանդիոն», 1910, № 4202, 1912, № 4834, 4724։

ռեին նոր հողամասեր, իսկ հետո ստացած վարկը մաս առ մաս վերադարձնեին պետությանը[11]։ Սակայն տեսնելով, որ աղաներն ու մահմեդական գյուղացիները չեն ուզում վաճառել որևէ հողամաս, իթթիհատականները որոշեցին այդ չնչին գումարը բաշխել հայերին և դրանով փակել նրանց հողային հաշիվները։ Նրանք ենթադրում էին, որ այդ գումարը հետո կհավաքեն աղաներից ու մահմեդական գյուղացիներից և կվերադարձնեն պետական միջոցները։

Բայց հայերը չէին ուզում փողային հատուցում, նրանք ուզում էին իրենց հողերը, որպեսզի շարունակեին զբաղվել սիրած երկրագործությամբ։ Բախվելով հայոց համառ դիմադրությանը, երիտթուրքերը բռնեցին խաբեբայության ճանապարհը։ Նրանք սկսեցին հրատարակել մի շարք օրենքներ, որոնցով փողի հետ միասին խոստանում էին նաև հող, բայց այնպիսի պայմաններ էին առաջարկում, որոնք հաղիվ թե կարողանային ընդունելի լինել հայերի համար։ Այսպես. օրենքներից մեկով սահմանում էին, թե այն հայերը, որոնք լքել են իրենց հողամասերը կամ զիջել դրանք պարտքի փոխարեն, այլևս իրավունք չունեն ետ պահանջելու, լավագույն դեպքում կարող են ստանալ գինը։ Եթե նրանց հողերի վրա կալմվել են մուհաջիրների գյուղեր, ապա չի կարելի ցրել այդ գյուղերը։ Հայերը կարող են պահանջել իրենց հողերի արժեքը, այն էլ նոր գներով, անհամաձայնության դեպքում կարող են դիմել դատարան[12]։

Ակնհայտ է, որ այս օրենքով իթթիհատականները ձգտում էին հայերին զրկել իրենց թանկարժեք հանդակներից, կա՛մ չնչին հատուցում տալով, կա՛մ ոչինչ չտալով։

Մի այլ օրենքով երիտասարդ թուրքերը արգելում էին ձեռք տալ նրան, ով հայոց հողերի վրա տուն ու տեղ էր կառուցել կամ վերանորոգել ավերակը, ով ցանք էր կատարել կամ հաստատվել կառավարության թողտվությամբ։ Այդպիսի դեպքերում հայերին առաջարկում էին դրամական հատուցում կամ նոր վայրեր. չհամաձայնվողը կարող էր դիմել դատարան։ Վարձակալը իրավունք չունի հող պահանջելու աղաներից ու բեյերից։ Բայց եթե վերջիններս հափշտակել են նրա հանդակները. ապա իշխանությունները պարտավոր են քննել վեճն ըստ էության։ Դատարանի որոշումից դժգոհողները կարող են դիմել պետական խորհուրդ, բայց միայն այն դեպքում, երբ իրենց իրավացիությունը կհաստատեն լրացուցիչ փաստաթղթերով[13]։ Բողոքարկման համար սահման-

---

11 Այս առթիվ պետք է վերհիշել հետևյալը. 1890-ական թթ. կոտորածների ժամանակ տասնյակ հազարավոր հայեր փախան Ռուսաստան և փրկություն գտան Անդրկովկասում։ Կոտորածներից հետո նրանք ցանկացան վերադառնալ հայրենիք։ Բայց Աբդուլ Համիդը չթույլատրեց։ Երբ գործին միջամտեց Նիկոլայ II-ը և պահանջեց ընդունել փախստականներին, սուլթանը խոստացավ նրան տալ 160000 թուրքական լիրա՝ իբրև այդ հայերի ունեցվածքի գին և խնդրեց դրանց թողնել Անդրկովկասում, կամ ավելի շուտ արտաքսել Սիբիր (ՌԱՔԱ, ֆ. «Թուրքական նոր սեղան», 1899—1907, գ. 2479, թ. 228)։ Երիտասարդ թուրքերը հողազուրկ հայերին 100000 լիրա առաջարկելով, ըստ երևույթին ուզում էին լուծել հայոց հողային խնդիրը այնպես, ինչպես Աբդուլ Համիդն էր ուզում, միայն այն տարբերությամբ, որ սրանք ավելի քիչ գումար էին առաջարկում, քան սուլթանը։

12 Երիտասարդ թուրքերը որքան շատ էին տարվում իրենց շովինիստական քաղաքականությամբ, այնքան հաստատ էին կանգնում այդ որոշման վրա։ 1914 թ. Շառայլը գրում էր, թե կառավարությունը Կ. Պոլսում «որոշած է ամեն գնով պայքարել հայոց հողատիրության դեմ, բոլոր բռնադրավումները նվիրագործելու համար որոշած է հողային խնդիրը կարգադրել այնպիսի եղանակով մը, որ հայոց դրամական հատուցում ըլլա, իսկ հողերը մնան իսլամներու և թուրքերու ձեռքը» («Մշակ», 1914, № 156)։

13 «Բյուզանդիոն», 1910, 7 հունիսի։

վում էր որոշակի ժամկետ, որից հետո դիմումները չէին ընդունվում։ Իշխանություններն իրենց որոշումները կենսագործում էին ոստիկանության միջոցով, որը տարբեր ձևերով պատժում էր անհնազանդներին[14]։ Մի խոսքով իթթիհատականները ձգտում էին անխախտ թողնել ստեղծված իրավիճակը և ստիպել հայերին՝ ընդմիշտ հրաժարվելու իրենց հողային պահանջներից։

Հասկանալով և արհամարհելով երկրի նոր տերերի խաղերն ու դավերը, հայ գյուղացիները պահանջեցին վարչական կարգով լուծել ագրարային խնդիրը, այսինքն՝ հողերը բռնությամբ վերցնել աղաներից ու բեյերից և վերադարձնել տերերին։ Նրանց այս պահանջը, անշուշտ, համընկնում էր նաև Արևմտյան Հայաստանի ամբողջ գյուղացիության շահերին և դրա համար կարող էր պաշտպանություն գտնել բոլորի կողմից։ Եվ երիտասարդ Թուրքերը, իբր թե արտահայտելով գյուղի աշխատավորության պահանջները, առաջարկեցին տեղական իշխանություններին վարչական միջամտություն ցուցաբերել հողային վեճերին։ Սակայն դրա հետ մեկտեղ հանձնարարեցին հաշվի առնել հետևյալ հանգամանքները. 1) Եթե վիճող կողմերը կներկայացնեն հավասարազոր փաստաթղթեր միևնույն հողամասի համար, ապա նրանց գործը քննել դատարանում։ 2) Եթե կողմերից մեկը ունի փաստաթուղթ, իսկ մյուսը չունի, ապա հողամասը տալ ունեցողին, իսկ չունեցողին առաջարկել դիմել դատարան։ 3) Եթե երկու կողմն էլ չունեն փաստաթուղթ, ապա հողամասը թողնել նրան, ով դրա համար արդեն տուրք է վճարում։ 4) Այն հողամասերը, որոնք բռնագրավված են 1908 թ. անմիջապես հետո, անհապաղ, առանց դատարանի վերադարձնել տերերին։ 5) Խուսափել Համիդի կառավարման տարիներին առաջացած հողային վեճերի քննարկումներից[15]։ Հասկանալի է, որ իթթիհատականները ձգտում էին մի կողմից օրինականացնել աղաների բռնագրավումները, իսկ մյուս կողմից՝ նրանց վերադարձնել անգամ այն հանդակները, որոնք գյուղացիները ետ էին խլել հեղափոխական ընդվզումների օրերին։ Ինչ վերաբերում է փաստաթղթերին, որոնց մասին ակնարկում էին նոր կառավարիչները, ապա համոզված էին, որ աղաները անպայման կունենան դրանք, իսկ եթե չունենան, դժվար չէր ձեռք բերել, քանի որ դատավորների վրա ունեցած ազդեցությամբ կարող էին գործը վճռել տալ իրենց օգտին։

1913 թ. իթթիհատականները հրատարակեցին հողային նոր օրենքներ, որոնցով ծրագրում էին գրանցել հանդակները իրենց տերերի անուններով, այսինքն՝ իրավական ձևակերպման ենթարկել փաստացի գոյություն ունեցող վիճակը, լայնացնել պետական ու վակֆային հողերը գրավ դնելու հնարավորությունները, կենսագործել հիպոտեկային սիստեմը, ընդարձակել ժառանգողների շրջանակները և այլն[16]։ Նրանք նախատեսում էին 1914 թ. Կ. Պոլիս հրավիրել Ֆրանսիայի կադաստրների վարչության երբեմնի նախագահ Մ. Լակրելին, օգտագործել նրա հմտությունն ու դիտելիքները, անցկացնել Արևմտյան Հայաստանում հողային տիրույթների սահմանազատումներ և դրանով լուծել ագրարային կնճիռը[17]։ Սակայն երկրի ներքին ու արտաքին վիճակը, մի կողմից, վրա հասնող առաջին համաշխարհային պատերազմը, մյուս կողմից, խանգարեցին իրագործելու այս մտահղացումները։

---

14 Նույն տեղում, 1913, № 5026։

15 Նույն տեղում, 1912, № 4745, 4753։

16 Х. З. Габидуллин, Младотурецкая революция. М., 1937. էջ 134։

17 «Հորիզոն», 1914, № 79։

Վերը հիշատակված օրենքներից զատ երիտասարդ թուրքերը հրատարակեցին նաև մի շարք նախագծեր հատկապես գյուղացիական այն հողերի մասին, որոնց տերերը փախել էին համիդյան չարդերից և միայն հեղափոխությունից հետո վերադարձել հայրենիք։ Նախագծերից մեկով նրանք այդ գյուղացիներին բաժանում էին երեք կարգի. 1) ովքեր դուրս են եկած օսմանյան հպատակությունից իրենց կամքով, 2) ովքեր դուրս են գրված այդ հպատակությունից համիդյան իշխանությունների կողմից և 3) ովքեր արտագաղթել կամ փախել են, բայց իրավապես դեռ շարունակում են մնալ թուրքական քաղաքացիներ։ Ապա սահմանվում էր, որ առաջին կարգի գյուղացիները իրավունք չունեն պահանջելու իրենց հողերը, իսկ երկրորդ և երրորդ կարգի գյուղացիները կարող են պահանջել, բայց կստանան դրանք միայն այն դեպքում, եթե ներկայացնեն համապատասխան փաստաթուղթ՝ թափու։ Ընդ որում, եթե նոր տերերը վերադարձող հայերի հողերի վրա կառուցել են տներ, ապա պահանջատերերը պարտավոր են վճարել դրանց արժեքը, բայց եթե կառուցել են գործարաններ, ջրանցքներ ու թանկարժեք այլ շինություններ, այսինքն՝ այնպիսի շինություններ, որոնք ավելի արժեն, քան հողերը, ապա նոր տերերը կարող են մերժել վերադարձողների պահանջները և առաջարկել նրանց հողի գինը։ Նախագիծը մերժում էր հայերին հող տալ նաև այն դեպքում, եթե նրանց հանդակները կառավարության որոշումով տրվել են մուհաջիրներին, եթե արտագաղթելիս հայերը իրենց հողամասերը թողել են հարազատներին և այլն։ Վերջում սահմանվում էր, որ դժգոհության դեպքում վերադարձողները կարող են դիմել դատարան[18]։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս նախագիծը դարձյալ բխում էր աղաների ու մահմեդական բնակչության շահերից և նպատակ ուներ ոտնահարել հայ աշխատավոր գյուղացիության իրավունքները։ Աղաներն ու մուհաջիրները զանազան եղանակներով կարող էին ապացուցել իրենց կառույցների մեծարժեք լինելը, բացի այդ, հայ շինականները համիդյան յաթաղանից փախչելիս կորցրել էին թափուները։

Երիտասարդ թուրքերը ծրագրում էին նաև հավաքել հողազուրկ ու սակավահող հայերին, տեղափոխել Արևմտյան Հայաստանից և բնակեցնել նրանց Միջագետքի խամ ու իսպան վայրերում։ Իրենց այս պլանը նրանք փորձում էին արդարացնել նրանով, թե ուզում են պահպանել Արևմտյան Հայաստանում բնակչության խաղաղությունը, որպեսզի քրդերի, ավելի ճիշտ՝ քուրդ աղաների ու հայերի միջև «ատելության ու թշնամության ոգի չծնի»[19]։ 1911 թ. Թուրքիայի նպարքոս Հակկը փաշան օսմանյան դահլիճում ուղղակի հայտարարեց. «Հողազուրկ հայերին կարելի է հող տալ ուրիշ վիլայեթներու մեջ, մանավանդ Միջագետքի արգավանդ դաշտերուն վրա»[20]։

Նոր կառավարիչները ստեղծում էին նաև հողային զանազան հանձնաժողովներ։ Ընդ որում այդ հանձնաժողովները ստեղծում էին բարձրաստիճան պաշտոնյաների նախագահությամբ և մահմեդական ու քրիստոնյա երևելիների մասնակցությամբ։ Իսկ գյուղացիները, որոնք ավելի շատ էին շահագրգ-

18 «Բյուզանդիոն», 1911, 5 Հունվարի։ «Ազատամարտ», 1911, № 483։

19 «Բյուզանդիոն», 1910, № 4235։

20 Նույն տեղում, 1914, № 5261։

դրված հողային խնդրի լուծումով, սովորաբար անտեսվում էին։ Երիտասարդ Թուրքերը հողային հանձնաժողովներ էին ստեղծում նաև Արևմտյան Հայաստանի առանձին վիլայեթներում։ Նրանք իբրև նախագահ հաճախ նշանակում էին կուսակալին, իսկ անդամներ՝ դարձյալ տեղի մահմեդական ու քրիստոնյա երևելիներին։ Բայց այս հանձնաժողովները ևս կամ ձևական նշանակություն ունեին, կամ գործնական քայլ կատարելիս աշխատում էին պաշտպանել աղաների ու մահմեդական բնակչության շահերը, օրինականացնել նրանց ապօրինի հափշտակումները։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ ձևականորեն աշխատելով Արևմտյան Հայաստանում հողային հարցի լուծման օգտին, երիտասարդ Թուրքերը փաստորեն ցանկանում էին ոչ թե լուծել այն, այլ խաբել ժողովրդական մասսաներին, հատկապես հայ գյուղացիությանը։ Նրանք ձգտում էին զանազան խոստումներով ու քաջալերանքներով մեղմացնել հողի աշխատավորների մեջ եղած հեղափոխական եռանդը, թմրեցնել ու ջլատել նրանց ուժերը և միավորվելով եսագիմական տարրերի հետ, վավերացնել նախկին ռեժիմի օրոք ստեղծված իրավիճակը։ Հեղափոխությունից շատ չանցած նրանք սկսեցին բացարձակորեն պաշտպանել աղաների ու բեյերի հողատիրությունը, մահմեդական գյուղացիության շահերը վեր դասել հայ շինականների շահերից և սրել մահմեդական և հայ գյուղացիների միջև եղած բախումները։ Վանի կուսակալ Բեքիր Սամի Բեյը, որը հանդիսանում էր նոր կառավարության ագրարային քաղաքականության կենսագործողներից մեկը, 1910 թ. ռուսական փոխհյուպատոս Օլֆերևի հետ զրուցելիս նշում էր, թե հայերը ուզում են հողային հարցը վճռել իրենց օգտին և, զրպարտելով նրանց, ավելացնում էր, թե իրենց պահանջներով նրանք այնքան հեռու են գնում, որ քիչ է մնում քրդերից խլեն բոլոր հողերը։ Ապա եզրափակում էր. «Ինչ հնարավոր էր դեռ երեկ, այսօր դարձել է անհնարին ու սխալ»[21]։ Եվ երիտասարդ Թուրքերը սկսեցին ուղղել իրենց սխալը. հատկապես 1910 թ. հետո շարունակեցին բռնագրավել հայոց կալվածքները։ Նրանք այդ բանը կատարում էին տարբեր ձանապարհներով։ Մի դեպքում պատճառաբանում էին, թե գյուղացիները շատ հող ունեն[22]։ Մի այլ դեպքում հայտարարում էին, թե պետականացվող հողը մահվուլ է (այսինքն անտեր է)։ Այս բանը նրանք կատարում էին հատկապես այն ժամանակ, երբ գյուղացիների մեջ վեճ էր գնում որևէ հողամասի համար։ 1912 թ. Խնուսում կայմակամը պետական հայտարարեց այն հողերը, որոնք քրդերը դեռ սահմանադրությունից առաջ զավթել էին հայերից, իսկ սահմանադրությունից հետո հրաժարվում էին վերադարձնել տերերին[23]։ Այդ նույն թվականին Սասունում գավառապետը պետականացրեց այն հանդակները, որոնց համար վիճում էին հայկական Շենքը և Կելիեկուզան գյուղերը։ Բնորոշ է, որ իշխանությունները գյուղացիական հողերը բռնագրավելուց հետո դրանք աճուրդի էին հանում[24]։

Սակայն ավելի հաճախ իթթիհատականները գյուղացիական հողերը բռնագրավում էին երկրագործական դրամարկղի միջոցով։ Հայտնի է, որ դեռ Աբդուլ Համիդի իշխանության տարիներին բաղմաթիվ շինականներ, հնարա-

21 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ցուց. 2, գ. 492, թ. 32։
22 «Հորիզոն», 1911, № 158։
23 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912—1914, ցուց. 483, գ. 1648, թ. 15։
24 «Աղատամարտ», 1914, № 1533։

վորություն չունենալով վճարել պետական հարկերը և վաշխառուական պարտքերը, ստիպված էին փող վերցնել այդ դրամարկղից և գրավ դնել իրենց հողահանդակները։ Հեղափոխությունից հետո նոր կառավարիչները չվերադարձրին նրանց հողերը, այլ վաճառեցին[25]։ Ապա շարունակեցին շնչին գումարներով վարկավորել շինականներին, բռնագրավել նրանց թանկարժեք հանդակները և աճուրդի հանել։ Հայ գյուղացիները չէին համարձակվում մասնակցել այդ աճուրդին, քանի որ գնողները մեծ մասամբ աղաներն ու բեյերն էին։ Երիտասարդ թուրքերը միայն մեկ տարվա ընթացքում (1911—1912) վարկ տվին. Էրզրումի վիլայեթում՝ 3403 հաղ. ղուրուշ, Տիֆլիսի վիլայեթում՝ 216 հաղ., Դիարբեքիրի վիլայեթում՝ 1752 հաղ., Սրվաղի վիլայեթում՝ 4611 հաղ., Խարբերդի վիլայեթում՝ 1643 հաղ. և, վերջապես, Վանի վիլայեթում՝ 137 հաղ.[26]։ Ընդ որում՝ նրանք վարկավորում էին գյուղացիական տնտեսություններին, մեծ մասամբ հողամասերը գրավ դնելու պայմանով։ Այսպես՝ նույն թվականին Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում իշխանությունները վարկ են տվել 11274 հոգու, որից 9513-ին՝ հողերը գրավ դնելու պայմանով, իսկ 1761-ին՝ փոխադարձ երաշխավորությամբ[27]։

Իթթիհատականները հայ գյուղացիների հողերի հետ միասին բռնագրավում էին նաև հայերի վանական և եկեղեցական հանդակները[28]։ Նրանք կամ ուղղակի հավիշտակում էին այդ հանդակները, կամ պետականացնում՝ մահվուլ հայտարարելով, այսինքն՝ չէին համարում օրինական տերեր այն անձանց, որոնց անունով գրանցված էին դրանք[29]։ Երիտասարդ թուրքերը հավիշտակում էին հայոց վանական կալվածքները նաև այն պատրվակով, որ իբր հոգևորականները տարիներ շարունակ չեն վճարել պետական տուրքերը։ Նրանք փորձում էին պետականացնել անդամ այնպիսի վանական հողեր, որոնք կառավարական ֆերմաններով ազատված էին տուրքերից[30]։ Կ. Պոլսի հայոց պատրիարքը մի քանի անդամ բողոքեց իթթիհատականների այդ վարքագծի դեմ։ Հայց վերջիններս զանց էին առնում այդ բողոքները։ Ավելին՝ հաճախ փորձում էին իրենց հափշտակումները հիմնավորել այն կրպարտչային հայտարարություններով, թե այդ հողերի վրա հայկական վանքերից ու եկեղեցիներից առաջ կառուցված են եղել մահմեդական մզկիթներ[31]։

Իրերի նման պայմաններում արևմտահայ գյուղացին հեղափոխությունից հետո էլ մնաց հողազուրկ ու սակավահող։

* * *

Փորձելով ամրապնդել իրենց դիրքերը ժողովրդական մասսաների մեջ, իթթիհատականները հեղափոխությունից հետո ձերբակալեցին քրդական որոշ աղաների ու բեյերի, հատկապես նրանց, որոնք տասնյակ տարիներ կեղեքել ու կոտորել էին ոչ միայն հայ, այլև բուրդ շինականներին։ 1908 թ. կալանավորեցին Քոռ Հյուսեին փաշային և Շաբիր աղային, իսկ 1909 թ. ամռանն ու աշ-

25 «Բյուզանդիոն», 1908, 13 նոյեմբերի։
26 «Ազատամարտ», 1912, № 1539 (թվերը ամբողջացնում ենք.—Ա. Հ.)։
27 Նույն տեղում։
28 «Մշակ», 1912, № 130։
29 «Եփրատ», 1914, № 4, էջ 116—117։
30 «Մշակ», 1912, № 138։
31 Նույն տեղում, № 97։ «Բյուզանդիոն», 1913, № 5066։

նանը՝ Սեիդ-Ալիին, Կոչի Մեհմեդ-Սըգրբին, Հասան աղա Սալախանին, Մուսթաֆա բեյին, Աղա բեյին, Դուլի խանին, շեյխ Սալիհ-բեյին, Ռըղա աղային և ուրիշներին[32]։ Նրանք ձերբակալվածներից ոմանց արտաքսեցին այլ վայրեր, մասնավորապես՝ Հալեպի վիլայեթը, ոմանց բախտը դեռ թողեցին անորոշ, իսկ ոմանց էլ մասսաների պահանջի ճնշման տակ ենթարկեցին հրապարակային անարգանքի։ 1909 թ. աշնանը Բալուում հայտնի մարդասպան Քեշիշի վրից կախեցին «Մարդասպանի վիճակն այս է» գրությունը և «կալանավորված վիճակի մեջ փողոցե փողոց պտտցնելով բանտ նետեցին»։ Ականատեսներից մեկը հաղորդում էր, թե ժողովուրդը ուրախանալով դրանով, պահանջում էր պատժել ոճրագործին. «ընդհանուրի փափաքն է, որ հօրինակ այլոց այս ճիվաղը կախաղան հանվի»[33]։ Նոր կառավարիչները անգամ մահապատժի ենթարկեցին որոշ աղաների, որոնք դարձել էին լիակատար չարիք ոչ միայն բնակչության, այլև տեղական իշխանությունների համար։ 1913 թ. սպանեցին Շատախի ու Նորդուզի հայտնի ավերիչներ Շաքիր աղային, Միր Մհեին, Սեիդ բեկին և այլոց[34]։

Սակայն երիտասարդ Թուրքերի ընդհանուր քաղաքականության մեջ այս միջոցառումները մասնակի բնույթ ունեին։ Իսկ որպես կանոն նրանք կանգնեցին քրդական աղաների շահերի պաշտպանության դիրքերում, դարձրին սրանց իրենց հենարաններ և նրանց բռունցքն ուղղեցին տեղական ժողովուրդների ազգային ու սոցիալական շարժումների դեմ։ Իթթիհատականները շուտով ադատեցին ձերբակալվածներին, իսկ արտաքսվածներին ետ վերադարձրին։ Նրանք անխախտ պահեցին աղաների ու բեյերի հողային ֆեոդալական սեփականությունը։ Դրա հետևանքով կանգուն մնացին Խիզանում Սեիդ-Ալիի, Շամդինանում՝ Մեհմեդ Սըգրբի, Ալչավազում՝ Քոռ Հյուսեին փաշայի, Արճեշում՝ Էմին փաշայի, Էրունում՝ Մեհմեդ Էմինի, Ջխուրում՝ Մուսա և Կասըմ բեյերի. Աղերդում՝ Բշարե Ջաթոյի, Աբաղայի դաշտում՝ Հյուսեին աղայի, Բերկրիում՝ Կոչ Մեհմեդ և Մուսթաֆա բեյերի, Դերսիմում՝ Տիապ աղայի, Ջարսանջակում՝ Օսման ու Իսահ բեկերի, Կարահիսարում՝ Ալիշան-զադեի և շատ ու շատ ուրիշ տիրակալների լայնածավալ կալվածքները։

Իթթիհատականները օգնեցին քրդական աղաներին օրինականացնելու իրենց հողային բռնագրավումները և թափու տվին համարյա բոլոր նրանց, ովքեր չունեին այն։ Բողոքի դեպքում գյուղացիներին ուղարկում էին դատարան, որտեղ նրանք անզոր էին պաշտպանելու իրենց իրավունքները։ Աղաները իրենց ապօրինի բռնագրավումները արդարացնելու համար գործադրում էին իրենց քաղաքական ազդեցությունը և տնտեսական հնարավորությունները։ 1910 թ. ականատեսներից մեկը գրում էր. «Դրամի ուժով փաստաբաններ կբռնեն և իրենց անիրավ գործողություններուն օրինավորությունը պաշտպանել կուտան, մինչ խեղճ գյուղացին իր արդար դատը պաշտպանելու միջոց չունի, ոչ լեզու ունի, որ իր դատը պաշտպանե և ոչ ալ դրամ ունի, որ փաստաբան վարձե։ Կալվածներ կան, որոնց վրա ոչ մեկ իրավունք կրնան հաստատել այդ աղաները, ընդհակառակը, անոնք արձանագրված են իրենց բուն տերերուն, հայ գյու-

32 ՌԱՔՌ, ֆ. «Քաղարխիվ», 1908, ցուց. 482, գ. 1644, թ. 83, գ. 716, թ. 135, 1909, գ. 543, թ. 51. ՍՍՀՄ ԿՊԿՊԱ, ֆ. 2000, գ. 6948, թթ. 234—235, 245, 307, 324, 330։

33 «Բյուլանդիոն», 1909, 21 դեկտեմբերի։

34 «Հորիզոն», 1914, № 158, 1913, № 229։

ղացիներու անունով, որք թափու ալ ունին, բայց կառավարությունը չուզեց պանոնք խլել և հանձնել իրենց ճշմարիտ տերերուն։ Երբ այս կարգի հողերն իսկ չեն կրնար խլվիլ, ո՞ւր կմնա ետ առնել այն հողերը, որոնք գոնե կերպով մը փոխանցված են աղաներուն անվան»[35]։

Երիտասարդ թուրքերը խրախուսում էին քրդական աղաներին՝ շարունակել գյուղացիների, հատկապես հայ շինականների հողերի բռնագրավումները։ Օգտվելով կառավարության պաշտպանությունից ու հովանավորումից, աղաները շարունակեցին բռնագրավել շինականների հողերն ու ընդարձակել իրենց կալվածքները։ Նրանց հափշտակումները մասսայական բնույթ ընդունեցին հատկապես 1910 թ. հետո, երբ իթթիհատականները ավելի պարզ դրսևորեցին իրենց հակահայկական նկրտումները։ Քրդական աղաները Գավաշում հայ գյուղացիներին առաջարկեցին գնալ դատարան և հայտարարել, որ իրենց հանդակները պատկանում են աղաներին։ Երբ գյուղացիները հրաժարվեցին, ոստիկանության միջոցով նրանց դատարան քշեցին[36]։ Խնուսում ու Դերջանում հայ շինականներին արգելեցին օգտվելու իրենց հողամասերից, իսկ երբ գյուղացիները փորձեցին չենթարկվել և շարունակեցին վարել իրենց հողամասերը, հարձակվեցին նրանց վրա, թալանեցին շարժական ունեցվածքը ու ծեծեցին[37]։ Բուլանըխում կոտորեցին Խասմիկ, Լաթար, Կոփ գյուղերի բնակիչներին, թալանեցին նրանց ունեցվածքը և գավթեցին հողերը, ապա ներխուժեցին Լսոնք գյուղը և պահանջեցին 10000 ոսկու արժողությամբ արոտավայրերն ու անտառները[38]։ Խութում հայ գյուղացիներին առաջարկեցին հանձնել իրենց հանդակները, այլապես սպառնում էին բռնություն գործադրել։ Հայերը իրենց կյանքը փրկելու համար կատարեցին նրանց պահանջը։ Աղաները նման առաջարկություն ներկայացրին նաև Էրուն, Սարը-սու գավառների, ինչպես և Մուշի դաշտի Ավղուտ, Գենձիկ, Ավնա և այլ գյուղերի բնակիչներին և հասան իրենց նպատակին։ Հայերը տեղափոխվեցին Թաթիկ նահիկն, մտադրվելով հետո անցնել Ռուսաստան[39]։ Խոշաբում աղաները, մարսելով Սալախանե հայոց աղգային կալվածքը, անցան Կասբը գյուղը և արգելեցին բնակիչներին մշակել հողամասերը, հայտարարելով, որ դրանք արդեն իրենց են պատկանում[40]։ Տիֆլիսում բռնագրավեցին Մեդեթաղ գյուղի վարելահողերը և չբավարարվելով դրանով, ձգտում էին հափշտակել նաև անտառները, արոտավայրերն ու ջրաղացները[41], իսկ Սասունի Շենքը գյուղում ուզում էին սեփականացնել ողջ հողերը, թողնելով բնակիչներին «միայն գյուղին շրջակա աննշան տեղերը»[42]։ Սղերդում բռնագրավեցին Շաթո և Թաբ գյուղերի հողերը, որոնց բնակիչները բազմաթիվ այլ գյուղացիների նման իրենց հանդակները ձևակերպել էին թափուով և երբեք հողային վեճեր չէին ունեցել որևէ տիրակալի հետ[43]։

---

35 «Հորիզոն», 1910, № 60։

36 Նույն տեղում, № 46։

37 ՌԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1911, գ. 2688, թթ. 75—76, ֆ. «Քաղարխիվ», 1911, գ. 1647, թ. 102։

38 «Հորիզոն», 1911, № 158, 1912, № 131։

39 «Բյուզանդիոն», 1913, № 4940։ ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1914, գ. 546, թթ. 131—133։

40 «Աղատամարտ», 1914, № 1563։

41 «Արարատ», 1914, № 413։

42 «Հորիզոն», 1913, № 180։

43 «Բյուզանդիոն», 1914, № 5266։

Քրդական աղաները հափշտակեցին նաև մի շարք այլ գյուղերի և առանձին գյուղացիների հանդակները[44]։ Նրանք տեղ-տեղ սկսեցին խլել նույնիսկ այն հողերը, որոնք գյուղացիները սահմանադրությունից հետո կարողացել էին ետ վերադարձնել։ 1913 թ. «Աշխատանքի» թղթակիցը գրում էր. «Քյուրտ տերեսյությունը չէր ունեցած ավելի պատեհ առիթ մը ուժգնորեն և վճռականորեն տիրապետելու իրենց բռնագրաված հողերը, քան այս տարին. շատերը նույնիսկ կառավարության աչառու քաղաքականությունենն նպաստավորվելով ձեռք ղարկին վերստին գրավելու այն հողերը, որոնք վերջին սահմանադրական չորս տարիներու մեջ իրենցմե ետ առնված էին. այսպիսի դեպքեր տեղի ունեցան են ավելի Շատախի, Կարճկանի և Ալջավազի շրջաններուն մեջ»[45]։ Աղաները ետ խլեցին գյուղացիների վերադարձրած հողերը նաև Խութում ու երկրի այլ վայրերում[46]։

Քրդական բեյերը չբավարարվեցին հայկական հողերի սոսկ հափշտակումներով։ Նրանք սկսեցին արտաքսել նաև այն գյուղացիներին, որոնք հաստատված էին իրենց հողերի վրա և իբրև մարաբաներ մշակում էին դրանք։ Նրանք վախենում էին, թե օգտվելով հարմար առիթից, հայերը կարող են դավթել իրենց հանդակները։ Հիշագրավ է, որ աղաները այդ քայլին դիմեցին հեղափոխությունից անմիջապես հետո։ 1908—1909 թթ. Զարսանչակում և Սիլվանում նրանք մարաբաներին առաջարկեցին հեռանալ իրենց կալվածքներից[47]։ Սակայն վստահ չլինելով իշխանությունների պաշտպանության վրա և երկյուղ կրելով գյուղացիական դանգվածների հեղափոխական տրամադրություններից, որոնք տակավին բարձր էին և բռնկվում էին պատեհ առիթով, ետ քաշվեցին այդ առաջարկություններից և առժամանակ բավարարվեցին միայն ֆեոդալական պարտավորությունների ընդլայնումով։ 1909 թ. Սիլվանում գյուղացիներին առաջարկեցին վճարել բերքի ոչ թե 1/15-ը, ինչպես առաջ էր, այլ 1/8-ը, այսինքն՝ նախկինի համարյա կրկնակին[48]։

Բայց սկսած 1910 թ. աղաները վճռականորեն արտաքսեցին հայերին իրենց կալվածքներից և նրանց փոխարինեցին քուրդ կամ այլազգի մահմեդական հողագործներով։ 1910 թ. նրանք հայ շինականներին վտարեցին Բիթլիսի սանջակի Կուրվա գյուղից և նրանց տեղը բնակեցրին քրդերի։ Ականատեսը գրում էր. «Սրտաճմլիկ տեսարան մըն էր, որ պարզվեցավ։ Հայ գյուղացիները իրենց սերունդներու արյունով ու քրտինքով ոռոգված հողերու վրա փռվեցան պառկեցին, խնդրելով ձիավոր զորքին, որ նախ ձիերու սմբակներու տակ զիրենք կոխկոտեն, ապա ուրիշներուն հանձնեն հողերը»[49]։

Աղաները 1911 թ. հայերին արտաքսեցին իրենց կալվածքներից նաև Վանի վիլայեթի Զեյնիս գյուղում։ Նրանք շտապեցին դիմել այդ քայլին մանավանդ

---

44 1911 թ., երբ քուրդ երեսփոխան Թահա էֆենդին (որն ընտրված էր Հնբյարիի բնակչության կողմից) օսմանյան պառլամենտում հայտարարեց, թե սահմանադրությունից հետո կայսրության արևելյան նահանգներում, այսինքն Արևմտյան Հայաստանում, աղաների կողմից չեն եղել գյուղացիական հողերի բռնագրավման փաստեր, երեսփոխաններ Վահան Փափազյանը, Հեղամ Տեր-Կարապետյանը և Վարդկեսը միաբերան առարկելով նշեցին, որ «Սահմանադրությունենն վերջն ալ տեղի ունեցած են բռնի հողային գրավումներ» («Բյուզանդիոն», 1911, № 4346)։

45 «Աշխատանք», 1913, № 10—106, էջ 5։

46 «Հորիզոն», 1910, № 243։

47 «Ազատամարտ», 1909, № 142, 145։

48 Նույն տեղում, № 145։

49 Նույն տեղում, 1911, № 207։

այն բանից հետո, երբ հայերը հրաժարվեցին ֆեոդալական պարտությունից և ներկայանալով իշխանություններին, սկսեցին ապացուցել, որ հողերն իրենց են պատկանում։ Վտարվածների մի մասը շուտով տեղավորվեց ուրիշ աղաների մոտ, իսկ մյուսը երկար ժամանակ թափառում էր դես ու դեն[50]։

Աղաները 1914 թ. արտաքսեցին հայ շինականներին նաև Ապաղայի դաշտում։ Հայերը (թվով 400 տնտեսություն) եկել հաստատվել էին այստեղ Նորգուղից՝ 1880—1890-ական թթ.։ Նրանք փախել էին Շաքիր աղայի ու Միր Մհեի ավազակային կեղեքումներից և, գալով Ապաղա, բնակվել Կոփ Մեհմեդի ու այլ բեյերի հանդակների վրա։ Հայերը պարտավորվել էին աղաների օդտին կատարել օլամ, վճարել բահրա և անխախտորեն կատարում էին իրենց պարտավորությունները՝ ինչպես մինչև հեղափոխությունը։ Բայց 1912 թ., երբ միջազգային դիվանագիտությունը քննարկման խնդիր դարձրեց հայկական հարցը, աղաները, ըստ «Մշակի» թղթակցի վկայության, «կասկածելով, որ հայերն էլ ի մոտո սնփականության խնդիր կարող են առաջ բերել Եվրոպայի քննիչների գալուց հետո, ձեռնարկել են այժմ նրանց դուրս քշելը Ապաղայից և նրանց ձեռքում գտնված հողերը ետ առնել նրանցից»[51]։ Աղաները հայ գյուղացիներին վտարեցին իրենց կալվածքներից նաև Մոտկանի Մղուկ գյուղում և այլ վայրերում[52]։

Երիտասարդ Թուրքերի հողային քաղաքականությունը որոշ չափով այլ էր քուրդ գյուղացիների նկատմամբ։ Հայտնի է, որ Համիդի հայահալած քաղաքականության շնորհիվ քրդերի թիվը Արևմտյան Հայաստանում դեռ հեղափոխությունից առաջ զգալի չափով աճել էր։ Միայն Մոտկանում 16 տարվա ընթացքում (1892—1908) այն 77 տնտեսությունից հասել էր 205 տնտեսության, իսկ հայերինը՝ 203 տնտեսությունից իջել էր 169 տնտեսության[53]։ Ներգաղթող քրդերը հաստատվում էին ինչպես իրենց ցեղապետների նվաճած, նույնպես և արտաքսված հայերի հողերի վրա։ Քրդական աղաները, հայկական հանդակները բռնագրավելիս, առիթը պատահած դեպքում հալշտակում էին նաև քուրդ գյուղացիների հողամասերը, հատկապես այն քրդերի, որոնք տակավին աղատ էին մնացել ֆեոդալական կախվածությունից։ 1911 թ. Գեղամ Տեր-Կարապետյանը, անդրադառնալով Թուրքիայի արևելյան նահանգների հողային հարցին, մատնանշում էր. «Անարդար գրավումներու դեմ մինակ հայերը չեն, մեր իսլամ հայրենակիցներն ալ կբողոքեն։ Զափ գրավումներու իբրև 60000 օրավար»[54]։ Այդ տարածությունը թեև մոտ 17 անգամ փոքր էր հայերից խլած հողային տարածությունից, այնուամենայնիվ զգալի էր։ Գեղամ Տեր-Կարապետյանը, դժբախտաբար, չի նշում, թե այդ հողաչափի ո՞ր մասն էր պատկանում քուրդ գյուղացիությանը, բայց հավանաբար մեծ մասը, քանի որ քրդական աղաները, քաշվելով իշխանություններից, չէին համարձակվում մասսայաբար բռնագրավել Թուրք գյուղացիների և Կովկասից ներգաղթած մուհաջիրների հանդակները։

Երբ երիտասարդ Թուրքերը անցան իշխանության գլուխ, մի շարք տեղերում քուրդ գյուղացիների վրայից վերացրին աղաների լուծը և վերադարձրին

50 «Բյուզանդիոն», 1911, № 4489 և 13 հունիսի։
51 «Մշակ», 1914, № 141։
52 «Բյուզանդիոն», 1912, № 4775։
53 «Աղատամարտ», 1911, № 665։
54 Նույն տեղում, № 489։

նրանցից բռնագրավված հողերը։ Միայն Ապաղայի դաշտում նրանք բեկական կախվածությունից ազատեցին 57 քրդական գյուղեր և հողերը թափու արեցին «քյուրտերու վրա ձրիապես»[55]։ Տեղ-տեղ էլ փորձեցին երկրագործներ դարձնել փոշվոր խաշնարածներին։ Որչափ իթթիհատականները փորձում էին այդ նպատակները կատարել գերազանցապես քրդաբնակ շրջաններում՝ հայ երեսփոխանները պառլամենտում պահանջեցին նույն քաղաքականությունը վարել նաև հայաբնակ վայրերում[56]։ Նրանց այս պահանջը թերևս համապատասխանում էր երկու ժողովուրդների շահերին. կարող էր նվազեցնել նրանց միջև եղած թշնամության ուժերը և ամրապնդել բարեկամությունը։ Գաղտնիք չէ, որ վաչկատունները տեղաշարժվելիս ճանապարհին հաճախ ավերում էին հայ շինականների ցանքատարածությունները, որի հետևանքով տեղի էին ունենում ծեծկռտուք, մարդասպանություն, առաջանում էր ազգամիջյան թշնամություն։ Սակայն վարելով ժողովուրդների ոչ թե մերձեցման, այլ նրանց տարանջատման քաղաքականություն, իթթիհատականները մերժեցին հայ երեսփոխանների պահանջը։ Բայց, չնայած որոշ միջոցառումների, իթթիհատականները, այնուամենայնիվ, քրդական աշխատավոր գյուղացիությանը հողով չբավարարեցին։ Նրանք կամ անտարբերություն էին ցուցաբերում հողազուրկ ու սակավահող քրդերի պահանջների նկատմամբ, կամ օգտագործելով նրանց պահանջները՝ սրում էին հայ-քրդական հակասությունները։ Աղաներից ու բեյերից հողը վերցնելու և այն քուրդ հողագործներին ու անասնապահներին հանձնելու և դրանով քրդական հարցը արմատապես լուծելու փոխարեն, երիտասարդ թուրքերը սկսեցին խրախուսել քրդերին՝ շարունակել հայկական հողերի հափշտակումները։ Եվ քուրդ գյուղացիները, ընկնելով նրանց ազդեցության տակ, մի շարք վայրերում զավթեցին հայ շինականների հանդակները։ 1912 թ. նոյեմբերի 26-ին ռուսական դեսպանը Կ. Պոլսից հաղորդում էր, որ Արևմտյան Հայաստանում «ագրարային հարցը օրեցօր սրվում է, հողերի մեծ մասը հափշտակված է քրդերի կողմից, իսկ իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտում, այլ հովանավորում ու ընդառաջում են այդ հափշտակումները»[57]։ Բնորոշ է, որ քրդերը, որոնք բռնագրավել էին հայոց հողերը դեռ Համիդի իշխանության տարիներին, սահմանադրությունից անմիջապես հետո երկրի որոշ շրջաններում լքում էին այդ հողերը և հեռանում։ Նրանք կարծում էին, թե կատարված քաղաքական հեղաշրջումը եկել է վերականգնելու ճշմարտությունը, պատժելու շարին և պաշտպանելու տուժածի իրավունքները։ Բայց երբ տեսան, որ նոր կառավարիչները հների նման շարունակում են խրախուսել հայկական հողերի հափշտակումները, պաշտպանում են մահմեդական բնակչության շահերը ու ոտնահարում քրիստոնյաների իրավունքները, նորից վերադարձան և կրկին տիրացան հայոց հողերին[58]։ «Հորիզոնի» թղթակիցը 1913 թ. գրում էր. «Սահմանադրության հռչակման առաջին տարում շատ քրդեր կամովին հեռացան իրենց բռնագրաված հողերից, բայց երբ տեսան, որ կառավարությունը առաջվա հայահալած քաղաքականությանն է հետևում, հովանավորում է նրանց, ովքեր շարունակում են տիրել հայերից խլած հողերին՝

55 «Բյուզանդիոն», 1914, 6 օգոստոսի։

56 Նույն տեղում, 1911, № 4533։

57 «Сборник дипломатических документов. Реформы в Армении». Петроград, 1915, էջ 3։

58 «Բյուզանդիոն», 1908, 9 հոկտեմբերի։

իրենք էլ նորից եկան և գրավեցին լրած հողերը»[59]։ Քրդերը վերստին հափշտակեցին նաև հայոց վանական հողերը, այսինքն՝ այն հողերը, որոնք հեղափոխությունից անմիջապես հետո նույնիսկ թողել ու հեռացել էին։ Նրանք այդպես վարվեցին Աղբակում, երբ 1909 թ. «նորեն տիրացան իրենց գրաված արտին ու սկսեցին վարել այն»[60]։ Երիտասարդ թուրքերը այնուհետև շտապեցին օրինականացնել քրդերի հողային հափշտակումները և սկսեցին թափուներ տալ նրանց։

Հայ շինականները բողոքեցին դրա դեմ։ 1912 թ. գարնանը Բաբերդի Պոսնիք գյուղի մուխթարը հեռագրում էր մայրաքաղաք՝ հայոց պատրիարքին՝ «Կայմակամը մեր օրինավոր թափուով ունեցած հողերը բռնի վաչկատուն քյուրտերու կուտա։ Սահմանադրության համաձա՞յն է սա։ Իմացուցեք»[61]։

Սակայն թուրքական իշխանությունները կամ անտարբեր էին մնում հայոց բողոքագրերի նկատմամբ, կամ դրանք ուղարկելով մեկ հաստատությունից մյուսը, թողնում էին անհետևանք[62]։

* * *

Երիտասարդ թուրքերը իրենց հողային քաղաքականության դասակարգային ուղեգիծը անց էին կացնում նաև թուրք ազգաբնակչության մեջ։ Հայտնի է, որ Արևմտյան Հայաստանում թուրք հողատերերը քրդերից հետո կազմում էին ֆեոդալական դասակարգի երկրորդ խոշոր զանգվածը (մյուս ազգությունների՝ հայերի, ասորիների, չերքեզների ու այլոց ներկայացուցիչները կազմում էին այդ դասակարգի սուսկ փոքր մասը)։ Դեռ Համիդի իշխանության տարիներին թուրք ավատատերերը երկրի մի շարք վայրերում բռնագրավել էին ոչ միայն հայ, այլև քուրդ և անգամ թուրք շինականների հողերի որոշ մասը։ Նրանք միաժամանակ տիրացել էին պաշտոնների և ամրապնդել իրենց տնտեսական ու քաղաքական դիրքերը, նրանք հանդիսանում էին կայմակամներ, մութասարրիֆներ, մյուդիրներ, դատավորներ, հարկահավաքներ և լայնորեն զբաղվելով նաև սելեֆդարությամբ, այսինքն վաշխառությամբ, իրենց ձեռքերում էին հավաքել երկրի մի շարք շրջանների «ամբողջ հրամանատարական դիրքերը»[63]։

Երբ տեղի ունեցավ հեղափոխությունը, իթթիհատականները թուրք կալվածատերերին չզրկեցին նրանց նվաճած դիրքերից, ընդհակառակը, սկսեցին նրանց սիրաշահել ու փայփայել, ներգրավել իրենց կուսակցության մեջ։ Իսկ թուրք ավատատերերը, տեսնելով նորելուկների այդ վերաբերմունքը, համակրեցին սահմանադրությունը և դարձան նրա պաշտպանները։ Ռուբեն Տեր-Մինասյանը իր հուշերում գրում էր, որ այդ ավատատերերը «սկսան ձևանալ հեղափոխական, մտան իթթիհատի շարքերը և անոր միջոցով ջանացին պահել իրենց դիրքերը սահմանադրական դրոշին ներքո։ Անոնք ոչ միայն դեմ չգնացին սահմանադրության, այլ անոր պաշտպան հանդիսացան, անոր ղեկավարության մեջ դիրք գրավեցին, սահմանադրական կարգերը այնպես դասավորեցին, որ իբրև «հեղափոխական և սահմանադրության միակ հավատարիմ հե-

59 «Հորիզոն», 1913, № 240։

60 Նույն տեղում, № 284։

61 «Ազատամարտ», 1912, № 894։

62 ՌԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1910, գ. 2678, թ. 29։

63 Ռ ո ւ բ ե ն Տ ե ր-Մ ի ն ա ս յ ա ն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Լոս Անջելոս, 1952, մաս 2, էջ 87։

նարաններ» անսահման իրավունքներ ավելցուցին իրենց արդեն ունեցածին վրա»[64]։

Եվ իսկապես, Բիթլիսում Դիդոյի Ռաշիդը, որ հին ռեժիմի օրոք թահսիլդար էր (այսինքն հարկահավաք), երիտասարդ Թուրքերի կառավարման տարիներին դարձավ տեղական իթթիհատական վարչության նախագահ։ Խոջա Իլասը, որ առաջ սոսկ սելիֆդար էր, այժմ դարձավ Սուլուխի գյուղատեր ու ընտրվեց օսմանյան պառլամենտի մեբուսի։ Ֆալամազը, որ բռնակալի իշխանության օրերին բազմաթիվ հայ ու քուրդ գյուղեր էր ավերել, հափշտակել նրանց կալվածքները, նոր կառավարիչների տարիներին դարձավ իթթիհատական կոմիտեի անդամ։ Եվ այդպես, «բազմաթիվ ուրիշ դեմքեր հին ռեժիմի երկրպագուներեն կարողացան բռնել հեղափոխության անսանձ ձիու քամակը, և իրենց ցանկացած ուղղությամբ քշեցին անոր բերած սահմանադրությունը։ Դուրան-բարձրավանդակի շրջանում, ով որ սահմանադրության թշնամին չէր, կամա թե ակամա հաշվի պիտի առներ այս մարդկանց, ուզեր թե չուզեր պիտի համբուրվեր, եղբայր ձևանար»[65]։

Ռուբեն Տեր-Մինասյանի այս վկայությունը Թուրքական բեկերի մասին պետք է բնորոշ համարել նաև Արևմտյան Հայաստանի մյուս վիլայեթների համար։ Հնչակյան գործիչ Ս. Սապահ-Գյուլյանը 1912 թ., լինելով Սըվազի վիլայեթի Շար-Դշլա ավանում, նշում էր, թե դա Թուրքական բեկերի տիրապետության շրջան է։ Այստեղ են հավաքված «կողոպտող, ավերող, գողեր պահող, ժողովրդի արյունը ծծող բոլոր բեկերը, աղաները, էշրաֆները»։ Նրանք «լայն կյանք են վարում, երկրի տերը իսկական իրենք են, կառավարություն, վարչություն՝ ամեն ինչ իրենց ձեռքին է, ամեն բան կարգադրող, տնօրինողը իրենք են... բոլորն էլ Թունդ իթթիհատականներ են»[66]։

Նման իրադրության մեջ հասկանալի է, որ երիտասարդ Թուրքերը չլուծեցին նաև Թուրք գյուղացիության հողային հարցը։ Առաջվա պես նրանց Թողեցին սակավահող ու հողազուրկ, տնտեսապես կեղեքված ու քաղաքականապես իրավազուրկ, իսկ բողոքի դեպքում նրանց խրախուսում էին շարունակել հայ շինականների հանդակների բռնագրավումը։ 1911 թ. հունիսի 10-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը հաղորդում էր, որ Մուշի դաշտում շարունակվում են հայերի ու Թուրքերի հողային վեճերը։ Թուրքերը օրը ցերեկով սպանեցին 8 հայ։ Վալին չմիջամտեց վեճին, միայն տուժածներին առաջարկեց դիմել դատարան[67]։

Մենք դժբախտաբար չունենք քիչ թե շատ բավարար տեղեկություններ այն մասին, թե սահմանադրությունից հետո Թուրք և քուրդ գյուղացիները ինչքան հող ձեռք բերեցին և ինչքանից զրկվեցին։ Բայց ակնհայտ է, որ սրանք, իբրև տիրապետող կրոնի և աղգության պատկանողներ, Արևմտյան Հայաստանում համեմատաբար լավ էին բավարարված հողով, քան հայերը[68]։

---

64 Նույն տեղում, էջ 87—88։

65 Նույն տեղում, էջ 88։

66 Ս. Սաաաահ-Գյուլյան, Փոքր Հայքի հիշատակները, Չիկագո, 1917, մաս 1, հատ. 1, էջ 346—347։

67 ՌԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1911, գ. 2680, թթ. 67—68։

68 Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965, էջ 77։

* * *

Արևմտյան Հայաստանում, բացի նշված ժողովուրդներից, ապրում էին նաև ասորիներ՝ գլխավորապես Հեքյարիում ու Դիարբեքիրի վիլայեթում։ Թուրքական սուլթանների, հատկապես Համիդի իշխանության տարիներին քրդական աղաները բռնագրավել էին ասորական գյուղացիների դաշտային հանդակների մեծ մասը և քշել նրանց լեռները։ Աղաները աշխատում էին ասորիների ձեռքից խլել նաև նրանց վերջին հանգրվանը, բայց նրանք ամրանալով հարազատ վայրերի բարձունքներում, հերոսաբար պայքարում էին քրդական ներխուժման դեմ։

Այդպիսով, երբ ի մի ենք բերում 1908 թ. հետո Արևմտյան Հայաստանում ագրարային հարցի շուրջը ծավալված պայքարը, նկատում ենք նրա լուծման երկու ուղի՝ երիտասարդ թուրքերի և գյուղացիության։ Առաջինները ձգտում էին լուծել այդ հարցն աղաների ու բեյերի օգտին, տալով գյուղացիներին չընչին գումար. երկրորդները՝ հայերը, թուրքերը, քրդերը, չեչենները, չերքեզները, ասորիները և ուրիշները, պահանջում էին լուծել ագրարային կնճիռը վարչական կարգով, բռնությամբ վերցնել հողը աղաներից ու բեյերից, հանձնել գյուղացիներին՝ անվճար օգտագործելու։

Սակայն երիտասարդ թուրքերը չկարողացան ապահովել կապիտալիզմի զարգացման անգամ պրուսական ուղին։ Հովանավորելով աղաներին ու բեյերին, հակադրելով մահմեդական բնակչությանը քրիստոնյաներին, նրանք ավելի սրեցին սոցիալական ու ազգային հակասությունները, իսկ հետո բռնեցին արկածախնդրության ու ոճրագործության ճանապարհը։ Իթթիհատականները նետեցին երկիրը առաջին համաշխարհային պատերազմի բոցերի մեջ, օգտագործեցին տուրքն ու կոտորեցին հայերին, իսկ իրենք այրվեցին այդ բոցերում ու անհետացան պատմությունից իբրև տխրահռչակ կառավարիչներ ու նողկալի եղեռնագործներ։

АГРАРНАЯ ПОЛИТИКА МЛАДОТУРОК В ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Доктор историч. наук А. С. АМБАРЯН

(Резюме)

В конце XIX—начале XX вв. аграрный вопрос был одним из главных проблем в Турции. Шовинистическая, антиармянская политика Абдул-Гамида особенно заострила эту проблему в Западной Армении, где после погромов 90-х годов турецкие феодалы получили возможность расширять свои владения за счет армянских земель.

Накануне революции 1908 г. младотурки обещали народным массам вернуть их землю, но после своего прихода к власти они, защищая интересы феодалов, обманули трудящихся, нередко разжигали между народами вражду и таким образом отвлекали их от классовой борьбы. Младотурки не только не решили аграрную проблему, но еще более углубили аграрные противоречия в Западной Армении.